

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության

Կ Ա Ր Գ

Սույն կարգը մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության <<Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N938-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2011 թվականի օգոստոսի 25-ի N240-ն որոշումը.

I Հիմնական դրույթներ

1. Սույն կարգը տարածվում է բակալավրատուրայում, մագիստրատուրայում և հետբուհական ծրագրերով սովորողների վրա, անկախ ուսուցման ձևից (առկա, հեռակա հեռավար) և մասնագիտություններից:
2. Ակադեմիական շարժունությունն ուսանողների, հետազոտողների ուսումը կամ որակավորումը բարձրացնելու նպատակով մեկ այլ ուսումնական հաստատությունում սովորողի կրթության շարունակումն է:
3. Ըստ ուսման նպատակի, կամ ժամանակահատվածի, բակալավրի մագիստրոսի և հետազոտողի (հետբուհական) կրթական ծրագրերով սովորողների ակադեմիական շարժունությունը կարող է լինել որոշակի ժամկետով (այսուհետև շարժունություն) կամ հիմնական (այսուհետև՝ տեղափոխությունը):

II Սովորողների ակադեմիական շարժունությունը

4. Սովորողների շարժունությունը չի հանգեցնում ուսման սահմանված ժամկետի ավելացմանը, եթե այն իրականացվել է սույն կանոնակարգին համաձայն:
5. Սովորողների շարժունության իրականացման եղանակներից է գործընկեր ուսումնական հաստատություններ, ինչպես նաև, սովորողի անհատական նախաձեռնությամբ, նրանց այլ ուսումնական հաստատություն ուղարկելը, կամ այլ ուսումնական հաստատությունից ՀԱԱՀ ուղարկելը հետևյալ նպատակով.
 - 5.1. Կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի շրջանակներում (երկու ավարտական փաստաթուղթ ստանալու) ուսանելու,
 - 5.2. Համատեղ աստիճանաշնորհման կրթական ծրագրերով (մեկ վկայական ստանալու) ուսանելու.
 - 5.3. Միջբուհական համագործակցության այդ թվում ակադեմիական փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանելու.
 - 5.4. Վերապատրաստում (այդ թվում լեզվական) անցնելու.
 - 5.5. Ուսումնական արտադրական, հետազոտական պրակտիկա անցնելու:
6. Շարժունությանը մասնակցող հավակնողների ընտրությունը կատարվում է մրցութային եղանակով՝ հաշվի առնելով նաև նրանց ակադեմիական առաջադիմությունը և ընդունող լեզվի (կամ օտար լեզվի) իմացությունը:
7. Շարժունության ծագրին մասնակցելու նպատակով կնքվում է եռակողմ կրթական համաձայնագիր սովորողի և ուղարկող ու ընդունող ուսումնական հաստատությունների միջև: Համաձայնագրում նշվում են այն առարկաները, որոնք սովորողները պետք է ուսումնասիրեն ընդունող ուսումնական հաստատությունում: Միաժամանակ նշվում են շարժունության արդյունքում առաջացած ակադեմիական տարբերությունների մարման ժամկետների վերաբերյալ սովորողի պարտավորությունները:
8. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության բակալավրի ծրագրի 30 տոկոսը:

9. Ընդունող բուհում ուսուցման ժամկետի ավարտից հետո սովորողն իր ուսումնասիրած առարկաների և պարապունքների ցանկը, ստացած կրեդիտները և գնահատականները հաստատող ակադեմիական տեղեկանքը պետք է ներկայացնի ՀԱԱՀ ակադեմիական ճանաչման մասին փաստաթուղթը նախապատրաստելու համար: